600.0094.24.12.02

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 դեկտեմբերի 2002 թվականի № 94Ա
քաղ.Երևան

«ՍՅՈՒՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ «ԵՂԵԳԻՍ» ՓՈՔՐ ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի ա) ենթակետը, 21-րդ հոդվածը, 22-րդ հոդվածի 2-րդ կետը և Հայաստանի հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1998 թվականի օգոստոսի 31-ի «ՀՀ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման (վերանայման) կարգը հաստատելու մասին» №40 որոշումը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Հերմոն գյուղի վարչական տարածքում գտնվող «Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի միասնական սակագինը սահմանել 20.7 դրամ/կՎտժ՝ ներառյալ ԱԱՀ-ն և 17.25 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ-ի:

2. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի մայիսի 6-ի «Սյունիք» բարեգործական հասարակական կազմակերպության «Եղեգիս» փոքր հիդրոէլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման մասին» № 31 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2003 թվականի հունվարի 24 -ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Վ. ՄՈՎՍԵՍՅԱՆ**

ք. Երևան
24 դեկտեմբերի 2002թ.
ժամը 17^{00}